ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի՝ ՀԵՌԱԿԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«23» հոկտեմբերի 2024 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի № 3-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2024 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 9^{00}-ին և ավարտվել՝ ժամը 17^{30}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Լ. Բալյանը - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյանը - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Բաղդասարյանը - «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ

Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի խորհրդի կազմում ընդգրկված «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության և «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի անդամների անդամությունը երկու տարով երկարաձգելու մասին:

Օրակարգային հարցի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
3. Լ. Բալյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
4. Վ. Սիրունյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Բաղդասարյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
6. Բ. Փափազյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Բախշյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց՝ 8 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 8 անդամներից 8-ը օրակարգի հարցին քվեարկել են «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի խորհրդի կազմում ընդգրկված «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության և «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի անդամների անդամությունը երկու տարով երկարաձգելուն:

10/28/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Խորհրդի նախագահ՝ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ **Ա. Գևորգյան**

ստորագրություն